ԱՐԱԳԻԼ *)

(Ժողովրդական մոտիվ)

I

Դու արնան ծաղիկ,
Դու զարնան ծաղի՛կ,
Արագիլ ախպէր.
Դու արնան ծաղի՛կ,
Դու զարնան ծաղիկ
Տարագիր ախպէր.
Թէ ութին չհասար
Ընին չես մնար,
Արագի՛լ ախպէր.
Թէ ութին չհասար
Ընին չես մնար
Տարագիր ախպէր...
Սարերի վրայով
Ծովերով, ջրով,
Կուգաս թեւածափ,
Ամպերի փէշով
Դուրանով, մէշով
Կուգաս թեւաթափ.
Բուք ու բորանը
Քամու բերանը
Հեծել ես, կուգա՜ս,
Տարուայ նշանդ
Սիրուն բերանդ
Ելել ես կուգա՜ս.

II

Դռանս հարթին
Կ'օրօրայ բարդին
Վրան քո բունդ,
Դռանս մայթին
Կ'երերայ բարդին՝
Վրան քո տունդ...
Կուգաս, որ բերես
Նշանած օրուան՝
Թորհուրդը տարուան.
Կուգաս, որ իջնես
Հինաւուրց ընիդ,
Օջախիդ, շէնիդ.
Թէ՛ ութին չհասար
Ընին չես մնար,
Արագիլ ախպէ՜ր.
Թէ ութին չհասար,
Ընին չես մնար,
Տարագիր ախպէր...

---

*) Ժողովրդական առասպելը ասում է, որ Արագիլը մարտի 8-ին եթէ չգայ՝ մարտի ընին չի մնայ, այսինքն ութի և ընի մէջ անպատճառ կուգայ. ըստ ժողովրդական հասկացողութեան Արագիլը միշտ նշան է բերում՝ «տարուայ նշան» – կամ արիւնոտ շոր կամ ծղոն և այլն..., որից զուշակութիւն են անում ապագայի համար։

III

Ընկերներ ենք մենք,
Վաղուայ եղբարք ենք
Տարագիր թռչո՛ւն.
Երկուսս էլ սիրող,
Երկուսս էլ տիրող
Հոր օջախ ու բուն...

Ու զալուդ փափագ
Կ'աշեմ՝ քո Ճամբէն
Մոլոր ու զազազ.,
Ու կարօտ, պապակ
Զէնդ կրփնտռեմ

Սրտիս սէջ մուրազ...
Դու արնան ծաղի՛կ,
Դու զարնան ծաղի՛կ,
Արագիլ ախպէր,
Դու արնան ծաղի՛կ,
Դու զարնան ծաղի՛կ,
Տարագիր ախպէր։

IV

Ա՛խ, ընկեր թռչուն,
Ետարա՞ք էս տարուն
Ինչ առել կուգաս.
Ետարա՞ք էս տարուն
Կրբերես արուն—
Արունո՛վ կուգաս.
Թէ՞ ոսկի ծղօն,
Կրբերես մեզ խոն—
Արեւով կուգաս...
Թէ բերես մեզ մօտ
Դու շորն արիւնոտ.
Ա՛խ, սիրտս է արիւն...
Թէ բերես ծղօն,
Կրբերես սեզ խոն
Սիրտս է ծաղիկ...
Թէ՝ ութին չհասար,
Ընին չես մնար,
Արագիլ ախպէր.
Թէ ութին չհասար,
Ընին չես մնար
Տարագիր ախպէր...

V

Թէ արուն բերիր,
Ու սիրտդ արուն,
Եղար տարեգիր.
Արագիլ ախպէ՛ր
Զեմ մնայ ես էլ—
Լինինք տարեգիր...
Թեւերիդ ա՛ռ ինձ
Էն ծիւն ամպերով
Աստղերի մէջով—
Հեռաստան տա՛ր ինձ
Լինենք սերտ ընկեր
Աշխարհի միջով.
Թեւերուդ ա՛ռ ինձ
Թոնենք Աստծու մօտ
Լինենք զազատուր.
Դատրկիւն եղած
Օջախից, ընից
Լինենք զազատուր...
Դու արնան ծաղիկ,
Դու զարնան ծաղիկ
Արագիլ ախպէ՛ր.
Ա՛խ, ութին արի՛,
Ընին մի՛ մնար
Արագիլ ախպէր,
Տարագիր ախպէր...

ՅՈՎՀ. ԿՈՍՏԱՆԵԱՆ

1905 մարտ 7